

## Արձանագրություն №6/2017-2018

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2018թ. մայիսի 3-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 68-ը (վաթսունութ):  
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
2. Դեկանի ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
3. Բակալավրի կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ գիտխորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյան):
4. 2018-2019 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների ուսման վարձավճարների չափերի հաստատում (զեկ. պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):
5. ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգի հաստատում (զեկ. ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
6. ԵՊՀ ներքին կարգապահական կանոններում փոփոխություն կատարելու մասին (զեկ. անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Ա. Թադևոսյան):
7. Հաղորդում ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնի 2016-2017 թթ. գործունեության մասին (զեկ.՝ կենտրոնի տնօրեն Դ. Է. Գևորգյան):
8. Ընթացիկ հարցեր.
  - 8.1. Իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանի և նույն ամբիոնի դոցենտ Հ. Կիրակոսյանի հեղինակած «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարություն միջնորդելու մասին:
  - 8.2. Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ Վ. Փիլիպոսյանի և Հ. Օհնիկյանի «Վերլուծական երկրաչափություն աշխատանքը» հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարություն միջնորդելու մասին:
  - 8.3. Ռուսաց լեզվի (հում. ֆակ. գծով) ամբիոնի դոցենտ Ա. Հակոբյանի «Ֆրանսիայի մասին ռուսերեն. Միջմշակութային հաղորդակցության փորձ» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և

այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարություն միջնորդելու մասին:

**8.4. ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ ընտրելու մասին:**

Գիտխորհրդի սովորող անդամ, ՈՒԽ նախագահ Դ. Ափոյանն առաջարկեց ընթացիկ հարցերի թվում լսել նաև վերջին քաղաքական իրադարձությունների արդյունքում դասերից բացակայած բազմաթիվ ուսանողների բացակայությունները հարգելի համարելու հարցը: Առաջարկն ընդունվեց: Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին. –

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհելու մասին,
2. Դեկանի ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումները հաստատելու մասին:

Գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Մարտիրոսյանը և Խ. Ներկարարյանը ներկայացրեցին դոցենտի գիտական կոչումներ հայցող, ֆակուլտետի դեկանի պաշտոնի հավակնող աշխատակիցների գործունեության վերաբերյալ համառոտ տվյալներ:

Դոցենտի կոչման հավակնում էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Աթոյան Մհեր Սերգեյի	Իջևանի մասնաճյուղի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ
2.	Գյոզալյան Վարդուշ Գաբրիելի	Կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ
3.	Կարապետյան Ռոման Գագիկի	Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ
4.	Հարությունյան Հասմիկ Թելմանի	Հնագիտության և ազգագրության ամբիոնի ասիստենտ
5.	Հովհաննիսյան Գոհար Հովհաննեսի	Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ
6.	Մանուկյան Մահակ Մամսոնի	Հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ
7.	Մարգարյան Հասմիկ Գառնիկի	Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ
8.	Սայադյան Սերգեյ Մուշեղի	Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի ասիստենտ
9.	Սողոմոնյան Գայանե Արշավիրի	Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի ասիստենտ

Ֆակուլտետի դեկանի պաշտոնի հավակնում էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Գրիգորյան Մարատ Արիսի	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
2.	Մարտիրոսյան Նադաշ Նարինբեկի	Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան
3.	Պետրոսյան Գեղամ Հարությունի	Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան

4.	Սահակյան Արթուր Արտուշի	Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկան
----	-------------------------	---

Կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- Վահրամ Պետրոսյան,
- Ժասմեն Աղայան,
- Ժենյա Թոթոյան,

Տեղի ունեցավ փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկությանը մասնակցեցին 68 հոգի: Արդյունքները հրապարակվեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Պետրոսյանի կողմից:

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Աթոյան Մհեր Սերգեյի	68	0	0
2.	Գյոզալյան Վարդուշ Գաբրիելի	66	1	1
3.	Կարապետյան Ռոման Գագիկի	68	0	0
4.	Հարությունյան Հասմիկ Թելմանի	68	0	0
5.	Հովհաննիսյան Գոհար Հովհաննեսի	68	0	0
6.	Մանուկյան Սահակ Սամսոնի	66	1	1
7.	Մարգարյան Հասմիկ Գառնիկի	68	0	0
8.	Սայադյան Սերգեյ Մուշեղի	68	0	0
9.	Սողոմոնյան Գայանե Արշավիրի	58	9	1

Դեկանի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Գրիգորյան Մարատ Արիսի	46	20	2
2.	Մարտիրոսյան Նադաշ Նարինբեկի	62	5	1
3.	Պետրոսյան Գեղամ Հարությունի	55	12	1
4.	Սահակյան Արթուր Արտուշի	64	3	1

**Որոշեցին.**

- Դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:
- Հաստատել ԵՊՀ վերոնշյալ աշխատակիցների՝ ֆակուլտետի ղեկան ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված դեկանների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. **Լսեցին.** – ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի հաստատման մասին: ԵՊՀ գիտխորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյանը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրերը՝ նշելով, որ դրանք անցել են ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգով պահանջվող բոլոր անհրաժեշտ փուլերը: Հաստատման էր ներկայացվում բակալավրի 53 ծրագիր:

**Որոշեցին.** – հաստատել բակալավրի ներկայացված ծրագրերը ծրագրերը:

3. **Լսեցին.** - 2018-2019 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների ուսման վարձավճարների չափերի հաստատում: Պրոռեկտոր Գ. Գևորգյանն առաջարկեց հաստատել ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների ուսման վարձավճարների չափերը՝ ըստ նախապես գիտխորհրդի անդամներին տրամադրված ցուցակների:

**Որոշեցին.** –

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2018-2019 ուստարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների ուսման վարձավճարների չափերը՝ համաձայն հավելվածների:

4. **Լսեցին.** - ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը հայտնեց, որ ներկայացվող կարգի նպատակը ֆորմալացնելն է ԵՊՀ-ում ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման գործընթացները: Հ. Ժամհարյանը հակիրճ ներկայացրեց կարգի կարևոր դրույթները: **Արտահայտվեցին.** – գիտական խորհրդի սովորող անդամ Դ. Ափոյանը առաջարկեց պրակտիկաների կազմակերպման հարցում մեծացնել ուսանողների նախաձեռնությունները: Ռեկտոր Ա. Սիմոնյանն ասաց, որ ընդհանուր առմամբ մոտեցումն ընդունելի է, սակայն դրա գլխավոր ռիսկը համարեց այն, որ հաճախ ուսանողները պրակտիկայի վայր են ընտրում՝ ելնելով անձնական կապերից, ինչը երբեմն գործընթացը ձևական է դարձնում:

**Որոշեցին.** – Հաստատել «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»:

5. **Լսեցին.** - ԵՊՀ ներքին կարգապահական կանոններում փոփոխություն կատարելու մասին: Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Թադևոսյանն առաջարկեց, ելնելով աշխատանքային օրենսդրության պահանջներից, փոփոխել կարգի 35-րդ կետը՝ ԵՊՀ գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական համակազմի (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), գիտական աշխատողներ) աշխատողների համար սահմանելով հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 32 ժամ ընդհանուր տևողությամբ, ԵՊՀ-ի մյուս աշխատողների համար սահմանելով է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 40 ժամ ընդհանուր տևողությամբ: Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

**Որոշեցին.** - «Երևանի պետական համալսարանի ներքին կարգապահական կանոնների» (ընդունված ԵՊՀ գիտական խորհրդի 2015թ. մարտի 26-ի նիստում) 35-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«35. ԵՊՀ գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական համակազմի (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), գիտական աշխատողներ) աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 32 ժամ ընդհանուր տևողությամբ:

ԵՊՀ-ի մյուս աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 40 ժամ ընդհանուր տևողությամբ:»

6. **Լսեցին.** - Հաղորդում ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնի 2016-2017 թթ. գործունեության մասին: Կենտրոնի տնօրեն Դ. Գևորգյանը, ի մասնավորի, ներկայացրեց կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները (գործնական հոգեբանների և հարակից մասնագետների համար մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում, հոգեբանական անհատական և խմբային աջակցության իրականացում, աջակցություն ուսանողների և շրջանավարտների մասնագիտական պրակտիկաներին և այլն), կենտրոնի աշխատակազմն իր գործառույթներով, մասնագիտական վերապատրաստման դասընթացների հիմնական ուղղություններն ու բովանդակությունը, կենտրոնի գործունեության արդյունքների դինամիկան, կենտրոնի կողմից կազմակերպված գիտաժողովները և աշխատաժողովները, իրականացվող դրամաշնորհային ծրագրերը: Դ. Գևորգյանը նշեց, որ 2016թ. ապրիլյան քառօրյայից հետո արագ արձագանքման միջոցառումների շրջանակում իրականացվել է հետևյալը.

- Ապրիլ-մայիս ամիսներին կենտրոնի մասնագետները պարբերաբար այցելել են ՀՀ կենտրոնական կլինիկական հոսպիտալ: Մատուցվել է հոգեբանական ծառայություն վիրավոր զինվորներին և իրենց հարազատներին (մինչև դուրս գրվելը),
- Հունիսին համատեղ ՄԱԿ-ի հետ կազմակերպվել է “Ճգնաժամային միջամտություն և հոգեբանական աջակցություն մեծահասակներին և երեխաներին” երկօրյա ինտենսիվ դասընթացը ՀՀ սահմանամերձ բնակավայրերի հոգեբանների և սոցիալական աշխատողների համար:

Դ. Գևորգյանը նաև առանձնացրեց Հոգեուռուցքաբանության հայկական ասոցիացիայի (APOA) հետ համատեղ իրականացված մի շարք միջոցառումներ.

- 2016թ. փետրվարի 4-ին Քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է իրազեկման արշավ՝ «Ախտորոշումը դատավճիռ չէ» խորագրով:
- 2016թ. մայիսի 19-ին կազմակերպվել է “Հաղթահարենք քաղցկեղը ժպիտով” վարպետաց դասը, որը վարեցին Հարվարդի համալսարանի «Դանա-Ֆաբեր» (Բոստոնի մանկական քաղցկեղի և արյան հիվանդությունների) կենտրոնի մասնագետները:
- 2016թ. մայիսի 6-ին և հունիսի 30-ին կազմակերպվել են “Իրազեկվածությունն առաջին քայլն է” խորագրով դասախոսությունների շարքի հանդիպումները՝ բժիշկ-ուռուցքաբանի և բժիշկ-անեսթեզիոլոգի հետ,
- 2016թ. դեպտեմբերին կազմակերպվել է “Պալիատիվ խնամքի հոգեբանական ասպեկտները և վիշտը” թեմայով դասախոսությունը, որը վարել է պալիատիվ խնամքի միջազգային փորձագետ Ստեֆեն Քոնորը:
- 2016թ. դեկտեմբերին կազմակերպվել է “Հոգևոր խնամքը պալիատիվ օգնության համատեքստում” դասախոսությունը, որը կարդացել է Տեր Բագրատ Սրբազանը:
- 2017թ. փետրվարի 3-ին կազմակերպվել է “Քաղցկեղի ստվերում” սեմինարը, նվիրված քաղցկեղի միջազգային օրվան:
- 2017թ. հունիսին կազմակերպվել է Գեշտալտ թերապիայի 5-օրյա սեմինար, որը վարել է Օլգա Բունգարդտը՝ Մարբուրգի Գեշտալտ ինստիտուտի համահիմնադիր, խմբավար, սերտիֆիկացված գեշտալտ-թերապևտ:

**Որոշեցին.** – Դ. Գևորգյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին.** - Իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանի և նույն ամբիոնի դոցենտ Ն. Կիրակոսյանի հեղինակած «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարություն միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ նշված հարցում միջնորդություն է ներկայացրել արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը: Ռեկտոր Ա. Սիմոնյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց նաև աշխատանքի վերաբերյալ համալսարանական և արտահամալսարանական մասնագետների դրական կարծիքները:

**Որոշեցին.** –

- «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» վերնագրով աշխատանքը (հեղինակներ՝ ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյան, նույն ամբիոնի դոցենտ Հասմիկ Կիրակոսյան) երաշխավորել հրատարակության:
- Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված աշխատանքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

2. **Լսեցին.** – Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ Վարդան Փիլիպոսյանի և Հակոբ Օհնիկյանի հեղինակած «Վերլուծական երկրաչափություն» վերնագրով աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին: Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ նշված հարցում միջնորդություն է ներկայացրել մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը: Ռեկտոր Ա. Սիմոնյանը գիտախորհրդի անդամներին ներկայացրեց նաև աշխատանքի վերաբերյալ համալսարանական և արտահամալսարանական մասնագետների դրական կարծիքները:

**Որոշեցին.** –

- «Վերլուծական երկրաչափություն» վերնագրով աշխատանքը (հեղինակներ՝ ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ Վարդան Փիլիպոսյան, Հակոբ Օհնիկյան) երաշխավորել հրատարակության:
- Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված աշխատանքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

3. **Լսեցին.** – Ռուսաց լեզվի (հում. ֆակ. գծով) ամբիոնի դոցենտ Ա. Հակոբյանի «Ֆրանսիայի մասին ռուսերեն. Միջմշակութային հաղորդակցության փորձ» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարություն միջնորդելու մասին: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը տարակուսանք հայտնեց աշխատանքի վերնագրի վերաբերյալ՝ այն չհամարելով հարմար վերնագիր բուհական դասագրքի համար: Ռեկտոր Ա. Սիմոնյանը հետաքրքրվեց, թե այս առնչությամբ ի՞նչ կարծիքներ են տվել արտահամալսարանական մասնագետները: Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ. Բալայանը առաջարկեց արտահամալսարանական կարծիքի կազմակերպման գործընթացը թողնել կրթության ազգային ինստիտուտին, ինչպես սովորաբար լինում է: Ա. Սիմոնյանն առաջարկեց հարցը հանել քննարկումից՝ մինչև արտահամալսարանական մասնագետի համապատասխան կարծիքի տրամադրումը: Առաջարկն ընդունվեց:

**Որոշեցին.** – Ռուսաց լեզվի (հում. ֆակ. գծով) ամբիոնի դոցենտ Ա. Հակոբյանի «Ֆրանսիայի մասին ռուսերեն. Միջմշակութային հաղորդակցության փորձ» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարություն միջնորդելու մասին հարցը հանել քննարկումից:

4. **Լսեցին.** – ԵՊՀ ՈԻԳԸ նախագահ ընտրելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը գիտական խորհրդին տեղեկացրեց, որ ասպիրանտուրան ավարտելու կապակցությամբ գործող ՈԻԳԸ նախագահ Մհեր Հակոբյանը վայր է դնում իր լիազորությունները: Ա. Սիմոնյանը շնորհակալություն հայտնեց Մ. Հակոբյանին՝ ծավալած բեղուն աշխատանքի համար: Սահմանված կարգի համաձայն Ուսանողական գիտական ընկերությունը նախագահի պաշտոնում առաջարկում է արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Վանատուր Արմենի Շերենցին: Ա. Սիմոնյանը հակիրճ ներկայացրեց Վ. Շերենցի կենսագրական տվյալները և գիտական հրատարակությունները:

**Արտահայտվեցին.** – արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը ողջունեց ԵՊՀ ՈւԳԸ նախագահի պաշտոնում Վ. Շերենցի առաջադրումը՝ նշելով, որ 4 տարի ճանաչում է նրան, որ նա ունի մասնագիտական ու մարդկային անհրաժեշտ որակները՝ ուսանողական այդ կառույցը ղեկավարելու համար:

Տեղի ունեցավ բաց քվեարկություն: Որոշումն անցավ միաձայն:

**Որոշեցին.** - Վանատուր Արմենի Շերենցին հաստատել Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում:

5. **Լսեցին.** – Քաղաքական իրադարձությունների արդյունքում դասերից բացակայած բազմաթիվ ուսանողների բացակայությունները հարգելի համարելու մասին: ՈԻԽ նախագահ Դ. Ափոյանը հետաքրքրվեց նշված հարցում Համալսարանի ղեկավարության դիրքորոշման մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ, թեև ուսանողի թիվ մեկ պարտականություններից մեկը դասերին կանոնավոր հաճախելն է, այդուհանդերձ տեղի ունեցած զարգացումների նշանակալիությունը և դրանցում ուսանողների մեծ թվի մասնակցությունը հաշվի առնելով՝ ԵՊՀ ղեկավարությունը գտնում է, որ պետք է հարգելի համարել այդ բացակայությունները, իսկ բաց թողած պարապմունքները լրացնելու համար լրացուցիչ շաբաթ նախատեսել:

**Որոշեցին.** – Հարգելի համարել ուսանողների բացակայությունները և բաց թողած պարապմունքները լրացնելու համար հատկացնել լրացուցիչ շաբաթ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Ն. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

10.05.2018թ.